



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 28 » դեկտեմբերի 2018թ. N: 338 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հուլիսի 21-ի N 800-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2018 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2018 թվականի դեկտեմբերի 17-ից Հայաստանի Հանրապետության «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության համար՝ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով, սահմանել լրացուցիչ արձակուրդ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 24-ը՝ բաց թողած ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու պայմանով:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին՝ սույն կարգադրության մասին 5

աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարությանը:

Կ.ՍԱՐԴՈՒԿԱՆՅԱՆ

Իսկական հեռ. թիվը է

